ԿԱՐԾԻՔ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Հայկ Գևորգի Բաբայանի «ՀՀ վարկային կազմակերպությունների ներքին հսկողության համակարգի կարգավորման հիմնախնդիրները» թեմայով Ը.00.03. «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցմանը ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Հետազոտության թեմայի արդիականությունը և հրատապությունը

Հայկ Գևորգի Բաբայանի թեկնածուական ատենախոսությունը նվիրված է ՀՀ վարկային կազմակերպությունների ներքին հսկողության համակարգի կատարելագործման հիմնախնդիրների ուսումնասիրությանը և դրանց լուծման արդյունավետ մեխանիզմների առաջարկմանը:

Ատենախոսության թեման արդիական է՝ պայմանավորված ֆինանսական համակարգի թվայնացման, ֆինանսական միջավայրի բարդացման և ֆինանսական կայունության ապահովման գործում ներքին հսկողության համակարգերի դերի աճով: Հեղինակը հիմնավորել է, որ վարկային կազմակերպությունների գործունեությունը ենթարկվում է բազմաբնույթ ռիսկերի, ինչի պայմաններում արդյունավետ վերահսկողական մեխանիզմների ներդրումը կարևոր նշանակություն ունի:

Աշխատանքում գնահատվել են ՀՀ վարկային կազմակերպություններում գործող ներքին հսկողության համակարգերը, ներկայացվել են դրանց կատարելագործման ուղիները՝ ներառյալ ժամանակակից տեխնոլոգիական լուծումների, արհեստական բանականության և մեքենայական ուսուցման տարրերի կիրառման հնարավորությունները:

Ատենախոսությունն ունի տեսական և կիրառական նշանակություն և կարող է օգտակար լինել ֆինանսական վերահսկողության ու ներքին աուդիտի ոլորտի մասնագետների համար: Բերված փաստարկներով ատենախոսը հիմնավորել է ընտրված թեմայի հրատապությունը և արդիականությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները

Հետազոտության նպատակն է բացահայտել ՀՀ վարկային կազմակերպությունների ներքին հսկողության համակարգերում առկա խնդիրները, թերությունները և մշակել կատարելագործման ուղիներ, որին հասնելու համար ատենախոսի կողմից առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- իրականացնել վարկային ինստիտուտների միջազգային փորձի, ինչպես զարգացած երկրներում, այնպես էլ ՀՀ ֆինանսական համակարգին մոտ գտնվող Եվրասիական տնտեսական միության երկրների համեմատական վերլուծություն,
- ուսումնասիրել վարկային կազմակերպություններում ներքին հսկողության միջազգային փորձի կիրառվող մոտեցումները և բացահայտել ՀՀ վարկային կազմակերպություններում այդ գործընթացում առկա հիմնախնդիրները,
- բացահայտել ՀՀ վարկային կազմակերպությունների ֆինանսական կառավարման խնդիրները ընդհանուր վերահսկողության համատեքստում և տալ համապատասխան լուծման ուղիներ,
- արհեստական բանականության կիրառմամբ իրականացնել վարկային կազմակերպությունների ակտիվների նախընտրելի կառուցվածքի որոշում և առաջարկել ակտիվների կառուցվածքի վերակառուցման մոդելային լուծումներ,
- արհեստական բանականության գործիքներով կառուցված մոդելներով իրականացնել ներքին հսկողության գործառնական նպատակի բարելավում,
- մշակել վարկային կազմակերպությունների ներքին աուդիտի ռիսկերի պլանավորման վրա հիմնված վերահսկողության մոտեցում:

Հետազոտության օբյեկտը և առարկան

Հետազոտության օբյեկտը Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկայում գործող վարկային կազմակերպությունների ներքին հսկողության համակարգերն են և գործունեության ֆինանսական արդյունքների ու կարգավորման օրենսդրական դաշտը, ***իսկ առարկան՝*** ՀՀ վարկային կազմակերպությունների ներքին հսկողության համակարգի կատարելագործմանը միտված հիմնախնդիրներն են:

Հետազոտության հիմնական գիտական արդյունքները և նորույթը

Ատենախոսությունում կատարված հետազոտությունների և վերլուծությունների ընթացքում ստացվել են տեսական, մեթոդական և գործնական արժեք ունեցող մի շարք արդյունքներ, որոնցից որպես գիտական նորույթ ներկայացվել են հետևյալ դրույթները.

- Կատարված ուսումնասիրությունների արդյունքում մշակվել են վարկային կազմակերպությունների ներքին հսկողության կանոնակարգման նվազագույն պայմաններ, որոնք միտված կլինեն ներքին հսկողության համակարգի բարձր ռիսկայնության նվազեցմանը:
- ՀՀ վարկային կազմակերպությունների ներքին հսկողության համակարգի համալիր ուսումնասիրությունների արդյունքում վեր են հանվել մի շարք հիմնախնդիրներ՝ կապված օրենսդրական համապատասխանության, կորպորատիվ կառավարման և ներքին հսկողության մեխանիզմների հետ, ինչպես նաև առաջարկվել են վերջիններիս լուծման ուղիներ:
- Մշակվել է ներքին աուդիտի ռիսկի գնահատման ցուցանիշների համակարգ տասներկու գործակցով, որը միտված է ներքին հսկողության արդյունավետության բարձրացմանը և ռիսկերի նվազեցմանը:

Հետազոտության գիտական արդյունքների հավաստիությունը և գործնական նշանակությունը

Հ. Գ. Բաբայանի ատենախոսությունն իրենից ներկայացնում է վարկային կազմակերպություններում ներքին հսկողության համակարգի մեթոդական մոտեցումների տեսական և գործնական ուսումնասիրությունների հիման վրա մշակված համալիր հետազոտություն, որը ներառում է այդ համակարգում առկա հիմնախնդիրների լուծմանը ուղղված որոշակի հիմնարար առաջարկություններ:

Հետազոտության արդյունքները կարևոր նշանակություն ունեն ֆինանսական ընկերությունների, մասնավորապես վարկային կազմակերպությունների, ներքին հսկողության համակարգի ձևավորման, օրենսդրական պահանջների իրականացման,

վերահսկողական աշխատանքների բարելավման, կորպորատիվ կառավարման համակարգերի ներդրման, ֆինանսական ռեսուրսների արդյունավետ կառավարման գործընթացներում:

Ատենախոսության ծավալը և կառուցվածքը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններ բաժնից, օգտագործված գրականությունից և հավելվածներից: Աշխատության ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ձևակերպվել են հետազոտության գլխավոր նպատակը և խնդիրները, ներկայացվել են հիմնական գիտական արդյունքները և դրանց գործնական նշանակությունը, տրվել են ատենախոսության տեղեկատվական և մեթոդաբանական հիմքերը:

Առաջին՝ «Վարկային կազմակերպությունների դերը տնտեսության զարգացման գործում և դրանցում կիրառվող ներքին հսկողության մոտեցումները» գլխում ատենախոսն իրականացրել է վարկային կազմակերպությունների էության և առանձնահատկությունների ուսումնասիրություն, վարկային ինստիտուտների միջազգային փորձի համեմատական վերլուծություն և վարկային կազմակերպություններում ներքին հսկողության միջազգային փորձի կիրառվող մոտեցումների համեմատական վերլուծություն, կատարել է ՀՀ-ում առկա հիմնախնդիրների բացահայտում: Ատենախոսը կատարված ուսումնասիրությունների արդյունքում եզրակացրել է, որ ՀՀ վարկային կազմակերպությունների ներքին հսկողության կանոնակարգման նվազագույն պայմաններ սահմանող որևէ նորմ սահմանված չէ, ինչը պատճառ է հանդիսանում ներքին հսկողության համակարգի բարձր ռիսկայնության համար:

Երկրորդ՝ «Վարկային կազմակերպությունների ներքին հսկողության մոտեցումները և նոր լուծումները արհեստական բանականության համատեքստում» գլխում ատենախոսը ուսումնասիրել է ՀՀ վարկային կազմակերպությունների ֆինանսական կառավարման խնդիրները ընդհանուր վերահսկողության համատեքստում, և արհեստական բանականության կիրառմամբ առաջարկել է վարկային կազմակերպությունների ակտիվների նախընտրելի կառուցվածքի որոշման մոտեցում, ակտիվների բաշխման

մոդելային լուծումներ: Վերլուծության արդյունքների հիման վրա վեր են հանվել ՀՀ Վարկային կազմակերպություններում ներքին հսկողության տեսանկյունից լուծում պահանջող կարևոր խնդիրներ:

Երրորդ՝ «ՀՀ վարկային կազմակերպությունների ներքին հսկողության համակարգի կատարելագործման ուղիները» գլխում ատենախոսը մշակել է արհեստական բանականության գործիքներով կառուցված մոդելներով ներքին հսկողության կատարելագործման ուղիներ և ՀՀ վարկային կազմակերպությունների ներքին աուդիտի ռիսկերի վրա հիմնված վերահսկողության մոտեցում: Մասնավորապես, վարկային կազմակերպության գործունեությունն օրենսդրական և բիզնեսի ռազմավարական պահանջներին համապատասխանեցնելու դերում ատենախոսի կառուցած մոդելները ներքին հսկողության տեսանկյունից մեծ դեր են կատարում վերահսկողներին, սեփականատերերին, գործադիր մարմնին արժեքավոր կարծիք կազմելու համար:

Եզրակացություններ բաժնում ներկայացվել են հետազոտության տեսական և մեթոդաբանական հարցերի ուսումնասիրությունից բխող եզրահանգումներ, ներկայացվել են վերլուծությամբ հիմնավորված տեսական և գործնական բնույթի առաջարկություններ:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Թվարկված առավելությունների հետ մեկտեղ թեկնածուական ատենախոսությունը զերծ չէ որոշակի թերություններից: Դրանցից նշենք հետևյալները.

1. Ներկայացված երկրորդ գիտական նորույթը՝ կապված ՀՀ վարկային կազմակերպությունների ներքին հսկողության համակարգում առկա օրենսդրական համապատասխանության, կորպորատիվ կառավարման և ներքին հսկողության մեխանիզմների խնդիրների բացահայտման հետ, իր բովանդակությամբ ավելի շատ արտացոլում է իրականացված վերլուծական ուսումնասիրության արդյունքները, իսկ առաջարկվող լուծումները լրացուցիչ հստակեցման կարիք ունեն: Բացի այդ, այն որոշակի

կրկնություն է պարունակում առաջին նորույթի հետ, ինչի արդյունքում բավարար չափով չի առանձնանում որպես նոր գիտական ներդրում:

2. Ատենախոսության 2.2 և 2.3 գլուխներում ֆինանսական ցուցանիշների վերլուծության հիման վրա կառուցված ակտիվների արդյունավետ հսկողության երկու մոդելները ունեն կարևոր տեսագործնական նշանակություն, որոնք նախատեսված են վերահսկող մարմինների, բիզնեսի սեփականատերերի և գործադիր կառավարման համար: Այնուամենայնիվ, երրորդ գիտական նորույթի ձևակերպման մեջ շահագրգիռ կողմերի դիտակետից ներքին հսկողության արդյունավետության բարձրացման գործիքակազմը բավարար չափով հստակեցված չէ, և նպատակահարմար էր այն ավելի կոնկրետացնել՝ ընդգծելով կիրառվող մեթոդների և գործնական ազդեցության շրջանակը:

3. Ատենախոսությունը նվիրված է ՀՀ վարկային կազմակերպությունների ներքին հսկողության համակարգի հիմնախնդիրների ուսումնասիրությանը, և աշխատանքում իրականացվել են միջազգային փորձի, ներքին հսկողության համակարգերի և ֆինանսական ցուցանիշների համակողմանի վերլուծություններ: Այնուամենայնիվ, հետազոտության արդյունքների՝ եզրակացության ներկայացման մասում նկատվում է հիմնականում ընդհանրական շեշտադրումներ, որի արդյունքում վերջնական եզրահանգումների և ստացված կիրառական արդյունքների ամբողջական ազդեցությունը բավարար չափով ընդգծված չէ:

4. Ատենախոսությունում նկատվում է մաթեմատիկական բանաձևերի լայն կիրառություն, ինչպես նաև արհեստական բանականության գործիքների օգտագործում, ինչի արդյունքում որոշ հատվածներում արձանագրվում են շեղումներ հետազոտության ընդհանուր տրամաբանությունից:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ատենախոս Հայկ Բաբայանը կատարել է ուշագրավ, ծավալուն, տեսամեթոդական և կիրառական բնույթի մոտեցումներ պարունակող հետազոտություն: Այն կարելի է որակել, որպես ինքնուրույն կատարված հետազոտություն, որտեղ մեքենայական ուսուցանման միջոցով դրված և լուծված են ՀՀ վարկային կազմակերպությունների ներքին

հսկողության համակարգի կատարելագործման հեղինակի կողմից շեշտադրված տեսական ու գործնական մի շարք կարևոր խնդիրներ:

Սեղմագիրը կազմված է ՀՀ ԲԿԳԿ-ի պահանջներով և համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը, արտացոլում է դրա հիմնական դրույթներն ու արդյունքները: Ատենախոսության սեղմագրում և հեղինակի հրատարակած գիտական 6 հոդվածներում, որպես գիտական նորույթ ներկայացված դրույթները ստացել են իրենց լուսաբանումը:

Վերը շարադրվածը թույլ է տալիս եզրակացնել, որ **«ՀՀ վարկային կազմակերպությունների ներքին հսկողության համակարգի կարգավորման հիմնախնդիրները»** թեմայով պաշտպանության ներկայացված ատենախոսությունը բավարարում է Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսություններին «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման» 6-րդ և 7-րդ կետերի և ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ նրա հեղինակը՝ Հայկ Գևորգի Բաբայանը արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս,
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Հ. Գ. Մնացականյան**
22.05.2026թ

Տնտեսագիտության թեկնածու, դոկտոր, պրոֆեսոր Հ. Գ. Մնացականյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՊՏՀ գիտական քարտուղար **Ն. Հ. Դարբինյան**